Ս. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԴՊՐԱՏՈՒՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Օշականում՝ Սբ. Մեսրոպ Մաշտոցի նվիրական շիրմի կողքին, վերակառուցյալ շենքում հաստատվեց Սբ. Մեսրոպ Մաշտոցի անվան Դպրատունն ընդ հովանյավ Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, և գործակցությամբ Արագածոտնի թեմի: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի կողմից Դպրատան վարիչ-տնօրեն է նշանակվել Հայաստանի Պատմության Պետական Թանգարանի նախկին տնօրեն պարոն **Ալֆրեդ Շահնազարյանը**, *որն ունի իր մնայուն գրասենյակը նորահաստատ Դպրատան շենքում:*

Դպրատունը լինելու է Սբ. Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը նվիրված գիտական աշխատանքի, գիտաժողովների, ցուցահանդեսների, գրադարանային, թանգարանային, ուսուցման, հայագիտական, մասնավորապես՝ Մաշտոցագիտական, ինչպես նաև հանդեսների և հոգևոր-մշակութային արարողությունների կենտրոն:

Այստեղ ժամանակի ընթացքում համախմբվելու են Սբ. Մեսրոպ Մաշտոցի, Սբ. Սահակ Պարթև Հայրապետի, Թարգմանիչ Վարդապետների, Ոսկեդարյան մշակույթի և առհասարակ Սբ. Մեսրոպի ժառանգությանը նվիրված գիտական և գրական աշխատություններ, հրատարակություններ, հոդվածներ:

Մայր Աթոռը կոչ է անում բոլոր մշակութասեր անձանց և հաստատություններին զորավիգ կանգնել Մայր Աթոռի այս նոր նախաձեռնությանը, իրենց կարելիության սահմաններում Ս. Մաշտոցի անվան դպրատանը՝ օժանդակ հանդիսանալով գրքերի, վավերագրերի և գեղարվեստական գործերի նվիրատվություններով:

Վարիչ-տնօրենի հետ կապ հաստատելու համար օգտվել հետևյալ հեռախոսահամարից՝ /8.243/ 3.61.50

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ